ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈ**։** ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈ**։**ԹԵԱՆՑ ԿԵԴՐ. ՄԱՐՄԻՆԻ ԺՈՂՈՎԸ

Երկուշաբթի, Մարտ 6-ի երեկոյեան Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի եկեղեցւոյ ժողովասրահին մէջ տեղի ունեցաւ Թեմիս եկեղեցիներու Երիտասարդաց Կեդրոնական Մարմինի հերթական ժողովը։ Ժողովը գլխաւորեց Գերպ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, ատենապետութեամբ տիար Կրէկ Մարթայեանի։

Քննարկուեցաւ ընդհանրապես կրօնադաստիարակչական հոգեւոր լսարաններու ծրագիրը. նշենք, որ մեր թեմի եկեղեցիներուն յարկին տակ ամսական դրութեամբ հոգեւոր լսարան հանդիպումներ տեղի պիտի ունենան։ Առաջինը տեղի ունեցաւ Կիրակի, 12 Մարտ, կ.ե. ժամը 5-ին, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մեջ։ Ձեկուցաբերն է Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, նիւթ ունենալով «Ինչպէ՞ս կարդալ եւ հասկնալ Աստուածաշունչը»։

Յառաջիկայ Ապրիլ ամսուան դասախօսութիւնը տեղի պիտի ունենայ Ապրիլ 9-ին, կ.ե. ժամը 5-ին, Էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ։ Գերպ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան պիտի խօսի հետեւեալ նիւթին մասին.-«Դռնբացէք։ Յայ եկեղեցին փրկութիւն կը քարոզէ՞»։

Երիտասարդաց Կեդրոնական Մարմինո hn ժողովին մանրամասնօրէն անդրադարձաւ Մաոտ 31-էև Ապրիլ 2-ին կազմակերպուած եռօրեալ բանակում-համագումարին, մասնակցութեամբ Միջին Արեւելքի Ուղղափառ եկեղեցիներու՝ Յայց. Առաքելական Կիլիկեան Էջմիածնական Թեմերուն, Ղոպտի եւ Uunnh եկերեցիներու Երիտասարդաց խմբակներու։

Դաստիարակչական բնոյթով այս համագումարին ընդհանուր թեման է Մեծ Պահոց հոգեւոր ճանապարհորդութիւնը։

MEETING OF THE WESTERN PRELACY YOUTH ASSOCIATION CENTRAL COMMITTEE

On the evening of Monday, March 6, the Western Prelacy Youth Association's Central Committee held its regular meeting at Montebello's Holy Cross Cathedral. The meeting was headed by Very Rev. Fr. Muron Aznikian and under the chairmanship of Mr. Greg Martayan.

One of the topics of discussion was the monthly religious education lecture series. The Central Committee has organized this series of 7 spiritually reviving lectures, the first of which took place at Montebello's Holy Cross Cathedral on Sunday, March 12 at 5:00 p.m. The speaker was Very Rev. Fr. Barthev Gulumian on the subject "How to read and understand the Bible". The next lecture will take place on Sunday, April 9, at Holy Martyrs Church in Encino at 5:00 p.m. The speaker will be Very Rev. Fr. Muron Aznikian with the topic "Opening the gates of heaven: Does the Armenian Church preach redemption?"

The committee also spoke in detail about the upcoming 3-day retreat, that will take place from March 31st to April 2nd and with the participation of the Coptic, Assyrian Orthodox, Western Diocese, and Western Prelacy youth groups. The theme of this retreat will focus on the period of Great Lent.